ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2020 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 47,711.4 մլն դրամ՝ պլանավորված 55,500.0 մլն դրամ ցուցանիշը կատարելով 86.0 տոկոսով կամ պակաս 7,788.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 80.7 տոկոսով կամ պակաս 11,413.5 մլն դրամով:

Դեկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4,401.0 մլն դրամ՝ 7,100.0 մլն դրամ պլանային առաջադրանքի դիմաց, կամ պակաս է հավաքագրվել 2,699.0 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 20, լուծարվել՝ 10 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 1 ստուգում, որի արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 5,0 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 33 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 14-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 8-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 11 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 7,519 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 7,294:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 14 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում դեկտեմբեր ամսում կատարվել է վերադարձ 102 վարձու աշխատողի՝ 18,4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 10 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԱՀ-ի դեմ սանձազերծած պատերազմական գործողությունների հետևանքով հարկ վճարողների մոտ առաջացած խնդիրների համապարփակ կարգավորման և գործարարության համար առավել բարենպաստ հարկային դաշտի ձևավորման նպատակով մշակվել ու ԱՀ կառավարության և Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել հարկային մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթը: Միաժամանակ, հաշվի առնելով նոր իրողությունները, լրամշակման նպատակով Ազգային ժողովից հետ է կանչվել 2020 թվականի ընթացքում Ազգային ժողով ներկայացված, սակայն դեռևս չընդունված հարկային մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի ու տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվի առնելով որոշ հարկ վճարողների մոտ ինտերնետ հասանելիության հետ կապված խնդիրները՝ կոմիտեի ուսումնական սրահում տեղադրվել են համակարգիչներ, ներբեռնվել համապատասխան ծրագրեր՝ հնարավորություն տալով հարկ վճարողներին անմիջականորեն ուսումնական սրահից ուղարկել հաշվարկ-հաշվետվություններ կամ դուրս գրել հարկային հաշիվներ:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 547, ելքագրվել՝ 107 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: